

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«16» հունվար 2020թ.

No 01 - Ն

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՊԱՏՇԱՃ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 10-րդ մասը

Հրամայում եմ

1. Հաստատել մատակարարի պատշաճ բաշխման գործունեության համար պատասխանատու անձին ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2020 թվականի հունվարի 16 – ի N 01 -Ն

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՊԱՏՇԱՃ ԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Սույն պահանջներով սահմանվում են մատակարարի պատշաճ բաշխման գործունեության համար պատասխանատու անձին (այսուհետ՝ Պատասխանատու անձ), նրա որակավորմանը և փորձառությանը ներկայացվող պահանջները:
2. Պատասխանատու անձը պետք է ունենա դեղագիտական կամ բժշկական կամ քիմիադեղագործական կամ քիմիական կամ դեղատեխնոլոգիական կամ կենսաբանական կամ անասնաբուժական բարձրագույն մասնագիտական կրթություն:
3. Այն դեպքերում, երբ Պատասխանատու անձի բարձրագույն կրթությունը տարբերվում է դեղագետի որակավորումից, ապա այդ պաշտոնում առաջադրվող անձը պետք է ունենա վերապատրաստումը հավաստող փաստաթղթեր՝ դեղային օրենսդրությանը, պատշաճ արտադրական գործունեությանը, պատշաճ բաշխման գործունեությանը, որակի կառավարման համակարգին վերաբերող թեմաներով:
4. Պատասխանատու անձի պաշտոնում նշանակված անձը պետք է ունենա դեղերի մեծածախ իրացման գործունեություն իրականացնող կազմակերպությունում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ վերջին երեք տարվա ընթացքում:

5. Պատասխանատու անձի գործունեությունը դադարեցվում է, եթե Պատասխանատու անձի գործատու մատակարար կազմակերպությունը խախտել պատշաճ բաշխման գործունեության կանոնները:
6. Սույն պահանջների 5-րդ կետով նախատեսված կարգով Պատասխանատու անձի գործունեության դադարեցումից հետո նա կարող է կրկին հավակնել աշխատանքի Պատասխանատու անձի պաշտոնում, եթե գործունեության դադարեցումից հետո աշխատել է մատակարարի մոտ երեք տարի, որից վեց ամիսը՝ նշանակումից անմիջապես առաջ: